ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 փետրվարի շաբաթ 2025
տպագրության ԺԴ տարի

14
(3045)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՐԱԿԱՆՈՒՄ Ո՞Վ Է ԵՌԱԲԼՈՒՐԻ ՀՈՂԵՐԸ ՎԱՃԱՌԵԼ

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում Արմեն Սարգսյանի նկատմամբ 19 դրվագ մեղադրանք է ներկայացվել այն բանի համար, որ նա Եռաբլուր պանթեոնին հարակից հողակտորները հերթով վաճառել է:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ Արմեն Սարգսյանը, լինելով ՀՀ ՊՆ աշխատակից, Անդրանիկ Եոնքի Մանուկյանի հետ փոխկապակցված իրավաբանական անձ հանդիսացող «Արարատ Մոթորս» ՍՊԸ-ին շահեկան պայմաններով, առանց խոչընդոտների, շուկայական արժեքից ակնհայտ ցածր գնով գույք է օտարել: Խոսքը պետության սեփականություն հանդիսացող, Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի, «Եռաբլուր» կոչվող բլուրներին կից տարածքում գտնվող 0,40935 հա մակերեսով հողատարածքի մասին է, որի շուկայական գինը 168 մլն 200 հազար դրամ է, սակայն վաճառվել է ընդամենը 36 մլն 841 հազար դրամով:

2-րդ դրվագով Արմեն Սարգսյանը Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի՝ Ծովակալ Իսակովի պողոտային հարող տարածքում գտնվող 0,19923 հա մակերեսով հողատարածքն է վաճառել Սերյոժա Ալբերտի Մանուկյանին: Դրա շուկայական արժեքը 52 մլն 650 հազար դրամ է, սակայն վաճառքը կազմակերպվել է ընդամենը 23 մլն 907 հազար դրամով:

3-րդ դրվագով նույն Արմեն Սարգսյանը ՀՀ պաշտպանության նախարարությանն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված Երեւան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի՝ «Եռաբլուր» կոչվող բլուրներին կից տարածքում գտնվող 0,2092 հա մակերեսով, 95 մլն 680 հազար դրամ շուկայական արժեքով հողատարածքը Գարեգին Աշոտի Գաբրիելյանին է օտարել ընդամենը 18 մլն 828 հազար դրամով:

Մնացած դրվագները՝ հաջորդիվ:

ՔՊ խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը անհետ կորած զինվորների ծնողներին անորոշ վիճակի մեջ է դրել. խոստացել է տեղեկություններ տրամադրել, սակայն հիմա չի կարողանում տալ դրանք: «Ժողովուրդ» օրաթերթը ահազանգեր է ստանում անհետ կորած զինվորների ծնողներից այն մասին, որ նախորդ տարի, երբ իրենք փակել էին Բաղրամյան պողոտան, Անդրանիկ Քոչարյանը, թերեւս նման դեպքերը բացառելու համար, հանդիպել է ծնողներին, խոստացել է բաներ, որոնք այժմ չի կարողանում իրականացնել: «Ժողովուրդ» օրաթերթին լուրեր հասան, որ Անդրանիկ Քոչարյանը ծնողներից մի քանիսին ասել է, թե իրենց հանձնաժողովը հստակ տեղեկություններ գիտի անհետ կորածների մասին, երբ ծնողները խնդրել են, որ իրենց եւս ինֆորմացիա տան որդիների մասին, Քոչարյանը հոխորտացել է, թե դա միայն իշխանությունների գործն է, ուժայինները կորոշեն՝ ինչ ասել, ինչ ոչ, ինքը չի կարող ծնողներին տեղեկություններ տալ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ շատ ծնողներ վերջին մեկ շաբաթվա ընթացքում զանգահարել են ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի ՔՊ-ական պատգամավորներին եւ խնդրել, որ իրենց որդիների պահման վայրի մասին ինֆորմացիա տան: Սակայն գրեթե բոլոր պատգամավորները ծնողներին պատասխանել են, թե Քոչարյանի այդ հայտարարությունից տեղյակ չեն, անհետ կորածների մասին էլ գիտեն այն, ինչ ծնողները: Այսինքն՝ Անդրանիկ Քոչարյանն իր հայտարարություններով վատ դրության մեջ է դրել անհետ կորածների ծնողներին, խաղացել նրանց հույզերի հետ եւ անհարմար իրավիճակ ստեղծել ոչ միայն իր, այլեւ թիմակիցների համար:



Մինչ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը հայտարարում է, թե իբր «պայքարում» է քրեական ենթամշակույթի դեմ, փաստերը այլ բան են խոսում: Փաշինյանի իշխանության օրոք քրեական հեղինակություններն ու օրենքով գողերը դատարաններում կամ արդարացվում են կամ էլ հայտնվում են ազատության մեջ ու մի բան էլ որոշ ՔՊ-ականների հետ հարցեր քննարկում: Երեկ ողջ Գյումրին զարմացել էր, որ Շիրակի ՔՊ-ական մարզպետ Դավիթ Առուշանյանը քրեական հեղինակության որդուն մարզպետարան էր տարել, իր կողքին նստեցրել ու Կադաստրի Կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի հետ հարց էր քննարկում: Լուսանկարում մարզպետ Առուշանյանի կողքին նստածը Գյումրու շուկայի սեփականատերերից է, առավել հայտնի քրեական հեղինակություն «Շարամ» մականվամբ Ռուդիկ Խոջոյանի որդին: ՔՊ-ական մարզպետը նրան տարել նստեցրել է իր կողքին, որ մարտին կայանալիք ընտրություններում քրեական աշխարհի ներկայացուցիչները ՔՊ-ի համար աշխատեն: Հիշեցնենք, որ դեռեւս 2016 թվականին Ռուդիկ Խոջոյանի տանը հայտնաբերվել էր «Նագան» մոդելի 7,62 մմ տրամաչափի թմբուկավոր ատրճանակ: Քրեական հեղինակություն 56-ամյա տղամարդը ձերբակալվել էր ապօրինի կերպով հրազեն ձեռք բերելու եւ պահելու կասկածանքով: Իսկ հիմա ազատության մեջ է:

«Ժողովուրդ» օրաթերթը իր լավատեղյակ աղբյուրներից տեղեկացավ, որ ԶՊՄԿ-ի հարցը հասել է իրավապահ համակարգ, գործադիր ու օրենսդիր մարմիններ: Սյունիքի մարզի Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի (ԶՊՄԿ) աշխատակիցները (բաժնետեր է նաեւ Կառավարությունը) հունվարի 31-ից գործադուլ են հայտարարել՝ պահանջելով աշխատավարձերի բարձրացում եւ աշխատանքային պայմանների բարելավում: Գործադուլին մասնակցում են ԶՊՄԿ-ի շուրջ 200 աշխատակից: Կոմբինատի ղեկավարության եւ գործադուլավորների միջեւ տեղի ունեցած բանակցությունները 7 օրից ավելի է, ինչ այդպես էլ որեւէ արդյունք չեն տալիս: Երեկ էլ գործադուլը շարունակվում էր: Թեեւ 70 աշխատակիցների տվյալներ հանքի տնօրենությունը փոխանցել է իրավապահներին, որ նրանցով զբաղվեն, սակայն իրավիճակը չի հանդարտվում: Նախ ԶՊՄԿ-ի վերնախավը գործադուլը չի համարում իրավաչափ եւ մինչ այսօր չի ընդառաջում իր աշխատակիցներին: Նրանք շտապել են միայն հաշվարկել հանքի կրած վնասները, իսկ մարդիկ, որոնք բողոքում են անմարդկային պայմաններում աշխատելուց, հանքի ղեկավարությանը չեն հետաքրքրում: Ընկերությունը պաշտոնական տվյալներ հաղորդեց, թե գործադուլի հետեւանքով ԶՊՄԿ-ն օրական մոտ 400 միլիոն դրամի վնաս է կրում, իսկ պետությունը՝ ավելի քան 100 միլիոն դրամի հարկային կորուստ: Բայց, դրանով հանդերձ, ԶՊՄԿ խորհրդի անդամները որեւէ քայլ չեն ձեռնարկում աշխատակիցների իրավունքները պաշտպանելու համար:

ԿՈՂՄ Է ԲՈՅԿՈՏԻՆ

«ՍԱ ՄԱՀԱԲԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ Է», ԳԵՎՈՐԳ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Ազգային Ժողովի նախկին պատգամավոր իրավաբան Գեւորգ Պետրոսյանի հետ:

-Որոշվեց, որ պետք է նախ դառնա 300 դրամ, ապա դարձավ դրամ: Արդեն 7 օր է, ինչ ուղեւորները կամ չեն վճարում, կամ 100 դրամ են վճարում: Դուք այս ամենի ելքն ինչպե՞ս եք տեսնում: Ի՞նչ պետք է անի քաղաքացին: Իշխանությունը կգնա՞ զիջման:

-Իրավագիտության մեջ գոյություն ունի իրավունքի ինքնապաշտպանություն հասկացությունը: Եվ դա գործի է դրվում այն ժամանակ, երբ քաղաքացին իրեն զգում է պետության կողմից անտեսված, արհամարհված, չհարգված եւ ինքն է անցնում իր իրավունքների պաշտպանությանը: Այս բոյկոտի դրսեւորումը հենց դրա ապացույցն է: Ես գտնում եմ, որ քաղաքացիները ճիշտ են վարվում, որ բոյկոտում են: Իշխանությունը չի մտածում քաղաքացիների մասին: Հարց է առաջանում՝ Ալեն Սիմոնյանը որ 12 հոգով գնում է ինչ-որ եվրոպական երկիր, ի՞նչ ունի անելու այնտեղ, ի՞նչ առաքելությամբ է գնում, ի՞նչ խնդիր լուծելու համար է գնում, ովքե՞ր են իր հետ եւ նրանից ամեն մեկն ի՞նչ գործ ունի անելու: Նիկոլ Փաշինյանն ասում էր՝ «պադավատապետություն» է: Հիմիկվանից ավելի ուժեղ «պադավատապետություն» չկա: Եթե նախկին նախագահները 3-4 մեքենաներով էին շրջում, որը տրամաբանական էր, իսկ հիմա Նիկոլ Փաշինյանը, չլինելով երկրի ղեկավար, 30 մեքենայով է ման գալիս: Էդ մեքենաներից թող 20-ը կրճատի, վաճառի, բյուջեին գումար գա եւ ավելի կարեւոր ուղղությունների վրա ծախսեն: Սա է վիճակը. անտնտեսվար են ծախսում պետական բյուջեի միջոցները: Ես գտնում եմ, որ քաղաքացիները ճիշտ են անում, որովհետեւ հասկանում են, որ այս իշխանության օրոք պետությունն ամբողջությամբ օտարվել է ժողովրդից: Իշխանությունը գործում է հանուն մի քանիսի, որ իրենք իրենց լավ զգան, լավ ապրեն, իրենց կանանց կամ իրենց զուգընկերուհիներին պետական բյուջեի հաշվին ման տան՝ առանց իրավական հիմքերի: Իսկ շարքային քաղաքացին մնացել է միայնակ իր ունեցած խնդիրների հետ:

-Այս վիճակը կարո՞ղ է մարդկանց թմբիրից հանել եւ փողոց դուրս բերել: Մի պահ եկավ, երբ մարդիկ որոշեցին, որ պետք է դուրս գան եւ պայքարեն իշխանությունների դեմ՝ Բագրատ Սրբազանի գլխավորությամբ, բայց նորից նահանջ եղավ: Հնարավո՞ր է տրանսպորտի թանկացումից սկսվի այդ պայքարը, թեժանա, եւ փողոցում մարդիկ սկսեն պայքարել իշխանությունների դեմ: Դուք տեսնո՞ւմ եք այս պահին նման իրավիճակ:

-Ես իրատես մարդ եմ եւ ցանկություններս չեն գերազանցում իրատեսությանը: Բնական է ցանկությունն այն է, որ այս իշխանությունը փոխվի, որովհետեւ սա մահաբեր իշխանություն է: Բայց, անկեղծ ասած, հույս չունեմ, որ տրանսպորտի թանկացման դեմ պայքարը կվերածվի համազգային պայքարի եւ դրա արդյունքում՝ իշխանությունը փոխելու պայքարի: Գուցե եւ այլ խնդիրներ էլ ավելանան, այդ խնդիրներն էլ այլ հասարակական շերտերի ներգրավեն, միավորվեն, բայց միայն տրանսպորտի խնդրով հնարավոր չէ իշխանությունը փոխել: Մենք ավելի լուրջ խնդիրներ ունենք. մեր դատական համակարգում խայտառակ իրավիճակ է: Մարդիկ դիմում են դատարան եւ տարիներով «մնում» են դատարանի դռների շեմին: Մեր կյանքում ոչ մի ոլորտ չկա, որտեղ ներդաշնակություն լինի, զարգացում արձանագրվի, առաջադիմական ցուցանիշներ լինեն: Հայաստանի սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանը սոցիալական, իրավական ժողովրդավարական եւ ինքնիշխան պետություն է: Սոցիալական ոլորտում մենք ունե՞նք առաջընթաց՝ չունենք, իրավական ոլորտում նույնպես առաջընթաց չունենք, ժողովրդավարության ոլորտում չունենք, ինքնիշխանության ոլորտում խայտառակ վիճակ է:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ԱՐԺԵՔՆԵՐ

ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ ՍՏԱՑԱԾ ՆՎԵՐՆԵՐԸ

Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք շարունակում են ԿԿՀ ներկայացնել այն նվերները, որոնք ստացել են պաշտոնավարման ընթացքում:

ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանը ՀՀ-ում Արաբական Միացյալ Էմիրությունների դեսպան Նարիման Ալ-Մուլլայից ստացել է մանուշակագույն ապակյա կուժ, որի արժեքը գնահատել է 109 հազար 390 դրամով: Նշվում է, որ վերջինս նվերը ստացել է Ամանորին, քանի որ հանդիսանում է ՀՀ ԱԺ Հայաստան-ԱՄԷ բարեկամական խմբի ղեկավար:

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը Ֆինլանդիայի խորհրդարանի նախագահ Յուասի Հալլա-Ահոյից 2025 թվականի հունվարի 22-25-ը Հյուսիսային Եվրոպայի եւ Բալթյան երկրների ՀՀ այցի շրջանակներում ստացել է «Ապակե թռչուն» անվանմամբ կապույտ գույնի հուշանվեր: Իր կողմից նվերի գնահատված արժեքը՝ 120 հազար դրամ: Նվերի արժեքի համար օգտագործվել է Finnish Design Shop խանութ-սրահի նույն հուշանվերի գինը:

Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչության աշխատակից Արման Սարգսյանը հունվարի 9-ին ԿԿՀ է ներկայացրել աշխատանքում դրսեւորած նախաձեռնողականության համար խրախուսական նվերը, այն է՝ «Գնոմոն» տեսակի ձեռքի ժամացույց, արծաթյա 925 հարգի, հետնամասում՝ «ՀՀ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ» գրառմամբ: Նվերի գնահատված արժեքը՝ 171 հազար 997 դրամ: Նվերը ստանալու օրը՝ 2024 թվական, դեկտեմբերի 24:

Հիշեցնենք՝ «Հանրային ծառայության մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում սահմանվել են նվերներ ընդունելու վերաբերյալ նոր կանոններ: Ըստ այդ կարգավորումների՝ պետությանը կամ համայնքին են հանձնվում պետական, պաշտոնական այցերի, միջոցառումների, ինչպես նաեւ աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակում տրվող նվերները, եթե դրանց արժեքը գերազանցում է 60.000 ՀՀ դրամը:

ՊԵՍԿՈՎԸ ՉԻ ԲԱՑԱՌԵԼ

Բաքվում Ռուսական տան շուրջ ստեղծված իրավիճակը կարող է քննարկվել Ռուսաստանի Դաշնության եւ Ադրբեջանի նախագահներ Վլադիմիր Պուտինի եւ Իլհամ Ալիեւի միջեւ, երբ ամենաբարձր մակարդակով շփումներ տեղի ունեանա: Այդ հնարավորությունը լրագրողների հետ զրույցում չի բացառել ՌԴ ղեկավարի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովը: «Իհարկե, մենք այս հարցը կբարձրացնենք տարբեր մակարդակների մեր գործընկերների հետ: Եթե ամենաբարձր մակարդակով շփումներ լինեն, մենք չենք բացառում, որ այդ հարցը կարող է քննարկվել երկու երկրների ղեկավարների երկխոսության ժամանակ»,- պատասխանել է Կրեմլի ներկայացուցիչն ան հարցին, թե սպասվում են արդյոք Պուտինի եւ Ալիեւի շփումներ այս թեմայով:

ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԸ

ArmLur.am-ը հայտնել է, թե ովքեր են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուները: Թեկնածուների թվում են Կարեն Բատիկյանը, Արտաշես Մաիլյանը, Արթուր Նահապետյանը, Պետրոս Մարտիրոսյանը: Ինչպես հայտնի է, ՔԿ նախկին նախագահ Արգիշտի Քյարամյանի սանիկը՝ Արթուր Նահապետյանը, որը Քյարամյանի՝ Ազգային Անվտանգության Ծառայությունում պաշտոնավարման ժամանակ տեղափոխվել էր ԱԱԾ եւ զբաղեցնում էր քննչական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի պաշտոնը, ապա նշանակվել էր Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր, եւ օրերս կրկին վերադարձավ քննչական կոմիտե: Նիկոլ Փաշինյանն հունվարի 8-ին, ՔԿ-ում կադրային փոփոխությունների համատեքստում որոշում էր ստորագրել՝ Արթուր Նահապետյանին նշանակել Քննչական Կոմիտեի նախագահի տեղակալի պաշտոնում: Այսինքն ներկայումս Քննչական կոմիտեի նախագահի տեղակալ, Արգիշտի Քյարամյանի սանիկը հիմա էլ որոշել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ դառնալ: Իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածու Արտաշես Մաիլյանը Հայաստանի 3-րդ նախագահ Սերժ Սարգսյանի դեմ հարուցված քրեական գործը քննող քննիչն է: Նա այժմ աշխատում է Հակակոռուպցիոն կոմիտեում եւ ցանկություն է հայտնել դառնալ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ:

ՎՐԱՍՏԱՆ–ԵՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն հայտարարել է, որ իր երկրի եւ Եվրամիության հարաբերությունները ներկայումս անընդունելի են, սակայն դրանք կարող են բարելավվել Վրաստանի նկատմամբ «եվրոպական բյուրոկրատիայի քաղաքականության» փոփոխման դեպքում: Այս մասին Կոբախիձեն ասել է Euronews-ի եթերում:

Վրաստանի իշխանությունները 2024 թ. նոյեմբերի 28-ին հայտարարել են, որ մինչեւ 2028 թվականն օրակարգից հանում են ԵՄ-ին երկրի անդամակցության շուրջ բանակցությունների մեկնարկը: Ի պատասխան՝ Արեւմուտքը Վրաստանի իշխանություններին մեղադրել է ժողովրդավարության հետընթացի մեջ եւ կոչ արել անհապաղ վերադառնալ ԵՄ տանող ուղի:

«Մեզ համար անընդունելի է մեր հարաբերությունների ներկա վիճակը: Մենք շահագրգռված ենք ԵՄ-ի հետ առողջ հարաբերությունների հարցում, որոնք այս փուլում չենք տեսնում: Բայց մենք համոզված ենք, որ դրա պատճառը ոչ թե Վրաստանի քաղաքականությունն է, այլ եվրոպական բյուրոկրատիայի քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ»,- ասել է Կոբախիձեն:

Նա հայտարարել է, որ գնդակը գտնվում է Բրյուսելի դաշտում, եւ որ ԵՄ-ն պետք է ավելի ճկուն լինի նոր անդամների նկատմամբ իր մոտեցումներում:

Վարչապետը նաեւ հայտարարել է, որ Վրաստանը հանդիպում է «որոշ լուրջ խնդիրների եվրոպական բյուրոկրատիայի հետ հարաբերություններում», բայց ընդգծել է, որ ինքը մնում է «շատ լավատես», որ Վրաստանը կստանա ԵՄ-ի անդամակցություն մինչեւ 2030 թվականը:

«Մենք հետեւողական կլինենք այդ նպատակին հասնելու հարցում եւ հուսով ենք, որ առաջիկա տարիներին Վրաստանի նկատմամբ մոտեցումն ավելի արդարացի կլինի», - հայտարարել է Կոբախիձեն:

ԱՋԱՏԵԼ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ

«Ընկերությունը սկսել է անօրինական գործողությունների եւ արտադրության սաբոտաժը հրահրող եւ կազմակերպող մասնակիցների աշխատանքային պայմանագրերի լուծման գործընթաց՝ խստորեն պահպանելով ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջները:

Աշխատանքից ազատման հրամաններ են տրվել թվով ութ աշխատակիցների վերաբերյալ՝ Վերոնշյալ անձինք այլեւս չեն հանդիսանում Ընկերության աշխատակիցներ եւ այս պահից սկսած նրանք չունեն Ընկերության հետ որեւէ աշխատանքային հարաբերություն, իսկ նրանց հայտարարությունները կրում են մասնավոր բնույթ:

Աշխատանքից բացակայող մյուս աշխատակիցներին Ընկերությունը հորդորում է օգտագործել այս հնարավորությունը՝ այսօր իրենց հերթափոխին ներկայանալ աշխատավայր եւ կատարել իրենց աշխատանքային պարտականությունները: ԶՊՄԿ-ում աշխատանքը պահպանելու Ձեր երաշխիքը կախված է Ձեր կողմից աշխատանքը անհապաղ վերսկսելուց: Բոլոր աշխատակիցների, նրանց ընտանիքների եւ Ընկերության շահերից է բխում արտադրական գործընթացի շուտափույթ վերսկսումը: Դրանից է կախված աշխատակիցներին աշխատավարձ եւ նպաստներ վճարելու հնարավորությունը»:

ԹՈՒՐՔԻԱՆ ԴԵՄ Է

ԱԴՐԲԵՋԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՈՒՆԵՆԱ

Ամենայն հավանականությամբ, հայ-ադրբեջանական գործընթացներում մոտ 2-3 տարի ստատուս քվո կդահիճանվի, սա մեզ միանգամայն հնարավոր եւ իրական է թվում: Այս մասին «Ուժի գործոն» հաղորդաշարում ասել է ամերիկյան Stratfor (RANE) վերլուծական կենտրոնի եվրասիական հարցերով վերլուծաբան Մեթյու Օրը: Նա չի կարծում, որ պատերազմն անխուսափելի է, բանի որ դեռեւս չկան շատ ուժեղ խթաններ, որ կողմերից մեկը հավատա, որ անհրաժեշտ է շտապ միջոցներ ձեռնարկել իրավիճակն արմատապես փոխելու համար: Փորձագետը չբացառեց, որ Ադրբեջանը կարող է շարունակել եւ ակտիվացնել սահմանազատման գծի երկայնքով հրթիռակոծման միջոցով ռազմական ճնշում գործադրելու փորձերը: «Բայց ես չեմ կարծում, որ մեծ պատերազմն անխուսափելի է, եթե Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ համաձայնություն ձեռք չբերվի», - հավելել է նա:

Օրը պարզաբանել է, որ, ընդհանուր առմամբ, եթե Ադրբեջանը մտադիր է մեծ ռազմական գործողություններ սկսել, ապա նախընտրելի է դրանք իրականացնել ամռանը կամ ամռան վերջին: «Սակայն, կրկնում եմ, որ առայժմ չենք կարծում, որ Ադրբեջանը դրա անհրաժեշտությունը տեսնում է: Ամենայն հավանականությամբ, նրանք զգում են, որ ճնշումների միջոցով կարող են հասնել իրենց նպատակներին, եւ քանի դեռ կարծում են, որ կողմերը մանեւրելու եւ գործարք կնքելու տեղ ունեն: Պարտադիր չէ, որ դա շուտով տեղի ունենա, շարունակվելու են ճնշումների փորձերը, այդ թվում՝ ռազմական, ուստի իրավիճակը մնում է անկայուն: Սակայն, մենք չենք հավատում, որ դա կարող է մեծ ռազմական հակամարտության վերածել»,- ընդգծել է նա:

Փորձագետի ենթադրմամբ պատճառը, թե ինչու Ադրբեջանը դժվար թե գնա մեծ էսկալացիայի, այն է, որ ռազմական տեսանկյունից դա շատ թանկ կարժենա: Ադրբեջանին ձեռնտու չէ քաղաքական, տնտեսական եւ աշխարհաքաղաքական տեսանկյունից, քանի որ դա կհանգեցնի Եվրոպայի եւ ԱՄՆ-ի հետ հարաբերությունների կտրուկ վատթարացմանը, ինչպես նաեւ կլինի սուր հարձակում Իրանի եւ Ռուսաստանի վրա: «Բաքուն կարծում է, որ առայժմ աշխարհաքաղաքական մանեւրների եւ մեծ տերությունների միջեւ հավասարակշռության տեղ է պահպանում, եւ Հայաստանի դեմ լուրջ էսկալացիան մեծապես կնվազեցնի նրա կարողությունը մանեւրելու համաշխարհային ասպարեզում: Բայց դա չի բացառում, որ իրավիճակի փոփոխությամբ նրա կարծիքը կարող է փոխվել, ինչը, սակայն, այս պահին քիչ հավանական է»,- նշել է Օրը:

Հայաստանով անցնող միջանցքի եւ «Խաղաղության խաչմերուկի» մասին Ադրբեջանի նախագահի վերջին հայտարարությունները, նրա կարծիքով, պատերազմի հայտարարություն չէին: Նա նշեց, որ դա վկայում է այն մասին, որ Հայաստանի տարածքով եւ, այսպես կոչված, «Զանգեզուրի միջանցքով» տարանցումը որոշների համար խաղաղության պայմանագրի առանցքային պայմանն է, բայց դա չի նշանակում, որ այդ կետն անպայման ներառվելու է խաղաղության պայմանագրի մեջ, սակայն պայմանագրից դուրս պետք է լինի շրջանակային համաձայնագիր: «Ալիեւը կարծում է, որ ինքն ամուր դիրքերում է, ինչի համար էլ նման հայտարարություններ է անում: Հայաստանի վարչապետը վերջերս հայտարարեց, որ չենք կարող խոսել միջանցքի արտատարածքային կարգավիճակի մասին, բայց եթե խոսքը գնում է Հայաստանով տարանցման որոշ հատուկ պայմանների մասին, ապա փոխզիջման կարելի է հասնել, իսկ եթե Ադրբեջանի կողմից զիջումներ լինեն «խաղաղության խաչմերուկում», այլ երթուղիներում, այդ դեպքում մանեւրելու եւ փոխզիջման տեղ կա: Բայց եթե սա ինչ-որ վերջնագիր է, ապա սա կարմիր գիծ է Հայաստանի համար: Առայժմ մենք կարծում ենք, որ մանեւրելու տեղ կա եւ գուցե փոխզիջում ձեռք բերվի», - կարծում է Օրը:

Նրա խոսքով, Թուրքիան դեմ է եւ չի ցանկանում մասնակցել Հայաստանի դեմ խոշոր ռազմական գործողությանը, քանի որ հասկանում է, որ եթե խաղաղ պայմանագիր կնքվի եւ բացվեն տրանսպորտային հաղորդակցությունները, ապա ողջ Հարավային Կովկասը կլինի իր ազդեցության գոտում:

Նա չի բացառել, որ Թուրքիան խորհուրդ է տալիս Ադրբեջանին խուսափել նման ուղուց եւ հետ է պահում իրադարձությունների նման զարգացումից, քանի որ նրա համար ձեռնտու է, որ ամեն ինչ կայուն մնա՝ հասկանալով, որ Ռուսաստանին ձեռնտու է, որ ներկա իրավիճակը պահպանվի, իսկ իրավիճակի բարելավումն ավելի ձեռնտու է Թուրքիային:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

400 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՎՆԱՍ

Արդեն մեկ շաբաթ է՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի մի խումբ աշխատակիցներ գործադուլ են հայտարարել, ինչի հետեւանքով կոմբինատի բնականոն գործունեությունը խաթարվել է: Բնականաբար, այս գործընթացներն ազդում են տնտեսական ցուցանիշների վրա: Անցած օրերին Ընկերության աշխատողները երեք անգամ փորձել են վերականգնել աշխատանքները, սակայն, ըստ կոմբինատի՝ փոքրաթիվ (մոտ 70) անձանց խմբի հաշվեհարդարի սպառնալիքների, ֆիզիկական միջամտության եւ տեղաշարժի սահմանափակումների ներքո չեն կարողացել վերագործարկել արտադրությունը: Մոտ մեկ շաբաթ մի խումբ օրինազանց աշխատակիցների եւ ԶՊՄԿ հետ չառնչվող քաղաքացիների կողմից իրականացվող գործողությունների հետեւանքով ընկերության բնականոն գործունեության ապօրինի խաթարման արդյունքում ընկերությունը օրական մոտ 400 միլիոն դրամի վնաս է հասցվել, իսկ պետությունը միայն հարկերի տեսքով կրել է օրական ավելի քան 100 միլիոնի դրամի վնաս: Տուժել են ընկերության հազարավոր աշխատակիցներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել նախագիծ՝ հանրակրթական ուսումնական հաստատություններում հեռավար (դիստանցիոն) կրթության կազմակերպման գործընթացը ավելի հստակեցված ընթացակարգով իրականացնելու նպատակով: Նշվում է՝ եթե գյուղական բնակավայրում հաստատությունը չունի համապատասխան առարկայի մասնագետ, կրթության շարունակականությունը ապահովելու համար հանրակրթական հիմնական կրթական ծրագրերով կարող է կազմակերպվել հեռավար կրթություն՝ մինչեւ սահմանված կարգով մրցութային հիմունքներով ուսուցչի թափուր տեղի համալրումը: Հիմնավորման մեջ նշված է, որ գյուղական բնակավայրերում հեռավար կրթության իրականացման ծրագիրը մենթոր դպրոցների ուսուցիչների կողմից նպատակաուղղված է կրթության շարունակականությունը ապահովելուն, եթե հաստատությունը չունի համապատասխան առարկայի մասնագետ՝ մինչեւ սահմանված կարգով մրցութային հիմունքներով ուսուցչի թափուր տեղի համալրումը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

Մեկնարկել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի պաշտոնական այցը Նորվեգիա: Օսլոյում՝ կառավարության հյուրերի ընդունելությունների տանը, կայացել է ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ Նորվեգիայի ԱԳ նախարար Բարթ Էյդենի առանձնազրույցը:

Աշխատակիցն էլեկտրահարվել է

Երեւանի քաղաքապետարանի տարածքում գործող ՀԷՑ-ի ենթակայանում ՀԷՑ-ի աշխատակիցներից մեկն էլեկտրահարվել է. նա շտապօգնության մեքենայով տեղափոխվել է հիվանդանոց:

5,5 ՏԱՐԻ

ԽԻՍՏ ՊԱՏԻԺ ԷԻՆ ԱԿՆԿԱԼՈՒՄ

«Ցոր» զորամասի զոհված հրետանավորների իրավահաջորդների ներկայացուցիչ Լիպարիտ Սիմոնյանն ու զինծառայողների հարազատներն ավելի խիստ պատիժ էին ակնկալում Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի համար:

Այս մասին ասել է փաստաբան Լիպարիտ Սիմոնյանը: Ըստ նրա Ջալալ Հարությունյանը դատարանի նիստերի դահլիճից չի ձերբակալվել, խափանման միջոցը թողնվել է անփոփոխ: Առաջին ատյանի դատարանի որոշումը մեկ ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել: «Մենք ավելի խիստ պատիժ էինք ակնկալում, բայց դեռ չեմ հասցրել խոսել տուժողների իրավահաջորդների հետ»,- նշել է փաստաբանը:

«Ցոր» զորամասի զոհված հրետանավոր Հայկ Մելիքյանի հարազատ Անահիտ Մանասյանի խոսքով ծնողները զմահ ազատազրկում էին պահանջում Ջալալ Հարությունյանի համար մինչեւ այն ժամանակ, երբ գործից անջատվեց մի մաս ու կարճվեց. «Մենք շատ կուզենայինք, որ նա ցմահ նստեր, որովհետեւ 5 տարի 5 ամիսը նման հանցագործի համար քիչ է: Եթե մյուս գործերը չկարճվեին, գուցե ցմահ ազատազրկման ենթարկվեր: Բայց էլի ուրախ ենք, որ պատժվելու է, մենք դա հաղթանակ ենք համարում», - ասել է Անահիտ Մանասյանը:

Հիշեցնենք, որ Սյունիքի մարզի դատարանը մեղավոր է ճանաչել Արցախի պաշտպանության բանակի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանին. նա դատապարտվել է ազատազրկման 5,5 տարի ժամկետով: Հունվարի 15-ին Սյունիքի մարզի դատարանը նրան մեղավոր էր ճանաչվել:

Հիշեցնենք, որ ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի գործով դրվագներից մեկով՝ 2020թ. հոկտեմբերի 7-ի հակահարվածի վերաբերյալ, դեռեւս նախաքննության ընթացքում քրեական հետապնդումը դադարեցվել է, իսկ մյուս դրվագով, որը վերաբերում է «Ցորի» զորամասի՝ Դ20 դիվիզիոնի, վրա հոկտեմբերի 12-ին հարձակմանը, ուղարկվել է դատարան:

Ըստ մեղադրանքի՝ նա, զբաղեցնելով ՊԲ հրամանատարի պաշտոնը, կոչումով՝ գեներալ-լեյտենանտ, հանդիսանալով պաշտոնատար անձ՝ հանրային ծառայող, կոչման եւ պաշտոնի բերումով հանդիսանալով հրամանատար՝ ծառայողական դիրքով եւ զինվորական կոչումով, տվյալ իրավահարաբերության շրջանակում ունենալով իր լիազորություններից բխող հրամաններ եւ կարգադրություններ տալու ու դրանց կատարումն ապահովելու իրավասություն, հայտարարված ռազմական դրության ժամանակ՝ 2020թ. հոկտեմբերի 12-ին, ծառայության նկատմամբ դրսեւորել է անփույթ վերաբերմունք, իր ծառայողական պարտականությունների կատարման նկատմամբ անբարեխիղճ եւ անփույթ վերաբերմունքի հետեւանքով դրանք կատարել է ոչ պատշաճ, ինչն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ:

Մասնավորապես, ըստ քրեական գործի, Դ20 դիվիզիոնի վրա հակառակորդի հարձակման ժամանակ դիվիզիոնի հրամանատարությունը կապնվում է Ջալալ Հարությունյանի՝ տեղակալ, հրետանու գծով պետ Գենադի Բաղդասարյանին, հայտնում հակառակորդի հարձակման մասին, սակայն Ջալալ Հարությունյանը, ըստ գործի, հայտնել է, թե մոտեցողները յուրայիններ են:

Ջալալ Հարությունյանի նկատմամբ ընտրված խափանման միջոց բացակայելու արգելքը մնացել է անփոփոխ՝ մինչեւ դատավճռի՝ օրինական ուժի մեջ մտնելը:

ՃՆՇՈՒՄՆԵՐԻ ՆԵՐՔՈ

ԳՈՐԾԸ ՍԽԱԼ Է ԹԱՐԳՄԱՆԵԼ

Բաքվի զինվորական դատարանը շարունակել է Ռուբեն Վարդանյանի եւ Արցախի մյուս պատանդյաների գործի քննությունը: Վարդանյանի գործը քննվում է առանձնացված եւ կշարունակվի փետրվարի 10-ին: Նիստերում, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, ներկայացվել են հատվածներ մեղադրական եզրակացություններից, իսկ Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանին եւ նախկին ԱԳ նախարար Դավիթ Բաբայանին նաեւ խոսք ասելու հնարավորություն են տվել:

Ռուբեն Վարդանյանի մասով եւս ներկայացվել է նրա մեղադրական եզրակացության մի մասը: ՄԻԵԴ-ում հայ գերիների շահերի պաշտպան, փաստաբան Սիրանուշ Սահակյանը որոշ մանրամասներ է հաղորդել Ռուբեն Վարդանյանի դատավարությունից, որը Վարդանյանի ընտանիքին է փոխանցել տեղի փաստաբանը:

«Ռուբեն Վարդանյանի գործով նիստից ունենք որոշակի այլընտրանքային տեղեկություն, որն ընտանիքն ստացել է նրա փաստաբան Աբրահամ Բերմանի միջոցով: Նիստում պաշտպանը երկու բացարկ է ներկայացրել, որից մեկը՝ թարգմանչի մասով: Բացի նրանից, որ շինծու գործը պարունակում է 422 հատոր ադրբեջաներենով, պարզվել է, որ նրան հատկացված թարգմանիչը, որը պետք է գործի նյութերի գոնե բանավոր թարգմանություն ապահովեր (քանի որ գրավոր թարգմանություն, անգամ՝ նշումներ անել թույլ չեն տալիս), անգամ նորմալ բանավոր թարգմանություն չի ապահովել եւ լրջագույն սխալներ է թույլ տվել: Անգամ որոշ տեղերում հղումներ են եղել ոչ թե Ադրբեջանի, այլ Բելառուսի օրենսդրությանը: Ըստ ինձ փոխանցված տեղեկությունների՝ դատարանը կարգադրել է Ռուբեն Վարդանյանին եւ նրա պաշտպանին տրամադրել ադեկվատ թարգմանություն: Ու սա՝ միայն երրորդ նիստի ընթացքում, երբ սկսվել է գործի ըստ էության քննությունը: Բացի այդ, մերժվել են պաշտպանական կողմի բոլոր միջնորդությունները՝ գործի պատճենները ստանալու եւ տեսաերիզների բովանդակությանը ծանոթանալու մասին: Բնականաբար, այս մասին ադրբեջանական լրատվամիջոցները չեն հայտնում»,-նշել է նա:

Ինչ վերաբերում է Արայիկ Հարությունյանի եւ Դավիթ Բաբայանի հայտարարություններին, ապա Սիրանուշ Սահակյանի խոսքով դրանք, բնականաբար, արվում են ճնշումների ներքո. «Ոչ մի միջազգային մասնագետի համար այդ ցուցմունքները արժանահավատ չեն հնչում»: Սահակյանը նկատել է, որ մեղադրական եզրակացության հրապարակված հատվածներից պարզ է դառնում, որ այս դատավարության ընդհանուր իմաստը Արցախի ինքնորոշման իրավունքի սկզբունքի անթույլատրելիության հասնելն ու ինքնորոշման բոլոր ջանքերը ոչնչացնելն է: Փորձում են ամեն կարգ ցույց տալ, որ այս ամենը եղել «տարածքների զավթման հանցավոր գործունեություն»:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԹՄՐԱՆՅՈՒԹԵՐԻ ԳՈՐԾՈՎ

Հունվարի 25-ին Քրեական ոստիկանության Շիրակի մարզային վարչությունում տեղեկություններ էին ստացվել, որ Գյումրիի բնակիչ 57-ամյա տղամարդը քաղաքային այգիներից մեկում գտնվող եւ իր կողմից շահագործվող աղավնատանը պահում է թմրանյութ: Քրեական ոստիկաններն այցելել են նշված վայր, որտեղ տղամարդը հայտնել է, թե ներկա պահին իր մոտ ոչինչ չկա, սակայն պատրաստ է թմրանյութ ներկայացնել աղավնատնից: Նախաձեռնվել է քրեական վարույթ: Տղամարդը ներկայացրել է պարկ, որի մեջ կար 178 գրամ կանեփանման զանգված եւ մոտ 17 գրամ կանեփի սերմ: Նա հայտնել է, որ թմրամիջոցն իրենն է՝ անձնական օգտագործման համար:

Հաջորդ տեղեկությունը Շիրակի քրեական ոստիկանները ստացել են փետրվարի 3-ին: Ըստ տեղեկության՝ Գյումրի քաղաքի բնակիչ 50-ամյա տղամարդը պահում եւ օգտագործում է «Մեթադոն» տեսակի թմրամիջոց, որը նրան իրացրել է 34-ամյա Գյումրու բնակիչը: Թմրանյութ պահելու, պատրաստելու եւ օգտագործելու հիմնավոր կասկածանքով Գյումրիի Կարեն Դեմիրճյան փողոցում ձերբակալվել եւ Քրեական ոստիկանության Շիրակի մարզային վարչություն է տեղափոխվել 50-ամյա տղամարդը: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է պլաստիկ տարա՝ լցված 70 մգ թափանցիկ հեղուկով, չօգտագործված երկու ներարկիչ — մեկ ապակե սրվակ: Նույն օրը, արդեն թմրանյութ իրացնելու կասկածանքով, ձերբակալվել է նաեւ 34-ամյա տղամարդը: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է 5 պլաստիկ տարա, 4-ը՝ լցված անգույն հեղուկով: Նա հայտնել է, որ հեղուկը մեթադոնային լուծույթ է: Երկու դեպքով էլ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն

ԿԱԼԱՆՔԸ ԵՐԿԱՐԱՑՎԵՑ

Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի որդու՝ Խաչատուր Բալասանյանի տնային կալանքը երկարացվեց 1 ամսով: Հիշեցնենք, որ 2025 թվականի հունվարին վերաքննիչ հակառուպցիոն դատարանի բավարարել էր դատախազի միջնորդությունը եւ որպես խափանման միջոց էր կիրառել կալանքը Գյումրու նախկին քաղաքապետ Սամվել Բալասանյանի որդու՝ Խաչատուր Բալասանյանի նկատմամբ: Նա ձերբակալվել էր 2024 թվականի հոկտեմբերի 11-ին, «Զվարթնոց» օդանավակայանում, ԱՄՆ մեկնելիս: Նախաքննական մարմինը կալանավորման միջնորդություն էր ներկայացրել Բալասանյանի որդու նկատմամբ, սակայն դատարանը որպես խափանման միջոց էր ընտրել 70 միլիոն դրամ գրավի կիրառմամբ տնային կալանքը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 6-ից 7-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 133 դեպք, որից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՄԱՌԱՆՈՑՆԵՐ ԵՆ ՍԱՐՔԵԼ

Պետության աջակցությամբ մինչեւ 21 միլիոն դրամ վարկային ֆինանսավորմամբ Իջեւան համայնքի Բերքաբեր գյուղի բարձունքում՝ կողք կողքի՝ միմյանցից մոտ 70 մետր հեռավորությամբ, Մոսկվայում բնակվող հայը 3 առանձնատուն է կառուցել իր 2 տղաների ու աղջկա համար: Հայաստանում գործող բանկերից մեկի Տավուշի մարզի մասնաճյուղի հավաքարարը նույն ծրագրով 3 տուն է կառուցել: Հայաստանի քաղաքներից մեկի բնակիչը նույն ծրագրով Տավուշի սահմանագոտում տասնյակ տներ է կառուցել: Սահմանամերձ Ոսկեվան գյուղի բնակիչները պատրաստվում են բողոք-նամակ ուղարկել Նիկոլ Փաշինյանին, թե ինչու հարեւան Բաղանիս գյուղը ընդգրկված է այդ ծրագրում, իսկ սահմանագոտու մարտերում բազում զոհեր տված Ոսկեվան գյուղը՝ ոչ:

ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄԸ

Նիկոլ Փաշինյանի դասընկեր, հարսանիքի քավոր, Փաշինյանի որոշմամբ՝ 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանին հարցրել ենք. «Որպես մարզպետ պաշտոնավարելու ընթացքում քանի՞ անգամ եք մամուլի ասուլիս անցկացրել, ե՞րբ, դրանցից յուրաքանչյուրին քանի՞ լրագրող է մասնակցել»:

Մարզպետարանից պատասխանել են. «Որպես մարզպետ պաշտոնավարման ընթացքում ՀՀ Տավուշի մարզպետը պարբերաբար հարցազրույցներ է տվել լրագրողներին եւ միշտ հասանելի է բոլոր լրատվամիջոցների ու լրագրողների համար»: Պատասխանից պարզ է դառնում, որ պաշտոնավարելու 3 տարի եւ 9 ամսվա ընթացքում Հայկ Ղալումյանը ոչ մի անգամ մամուլի ասուլիս չի տվել:

ԿԻՐԱՆՑԻ ԵՐԵԽԱՆԵՐԸ ՎԱԽԵՆՈՒՄ ԵՆ

Կիրանց գյուղի նորակառույց դպրոցի խաղահրապարակում երեխաները չեն խաղում: Խաղահրապարակը, սահմանազատման անվան տակ Կիրանցի հողերն Ադրբեջանին հանձնելուց հետո, սահման դարձած միջպետական մայրուղու եզրին է: Դրա կողքին սահման հանդիսացող պատի շարունակությունն է, որը շերտավարագույրի նմանվող թիթեղյա ցանկապատ է: Եթե ադրբեջանական զինուժը որոշի ոտնձգությունների դիմել, թիթեղյա ցանկապատը դրան արգելք չի կարող լինել: Նիկոլ Փաշինյանը հավաստիացնում է, որ երբեք Կիրանցում ապրելն ու սովորելն այսքան անվտանգ չի եղել, ինչպես հիմա: Իսկ Կիրանցի երեխաները, վտանգ զգալով, վախենում են խաղալ սահմանի եզրին գտնվող խաղահրապարակում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽԻ ՀԱՐՑՈՎ

ԿՈՉ ԵՆ ԱՆՈՒՄ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ

Հայ դատի Ամերիկայի հանձնախումբը Միջազգային կրոնական ազատության գագաթաժողովի շրջանակներում ԱՄՆ ղեկավարությանը կոչ է արել որոշակի գործողություններ ձեռնարկել Արցախի վերականգնման, Հայաստանի անվտանգության եւ Սիրիայից ու Լիբանանից մինչեւ Երուսաղեմի հայկական թաղամաս հայ համայնքների պաշտպանության հարցերում: Այս մասին հաղորդագրություն է տարածել ՀՅԴ Բյուրոյի Հայ դատի կենտրոնական գրասենյակը: «Հայաստանին նվիրված պանելային քննարկումը, որը վարում էր "American Enterprise Institute"-ից Մայքլ Ռուբինը, մասնակցում էին Հայ դատի Ամերիկայի հանձնախմբի Վաշինգտոնի գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը, ԱՄՆ-ում Արցախի Հանրապետության նախկին ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը, իրավապաշտպան Քրիստինե Առաքելյանը եւ կոնգրեսական Քրիս Սմիթը:

Քննարկման մասնակիցներն ընդգծել են, որ 2023 թ. Ադրբեջանի հարձակումը եւ Արցախից 150.000 հայերի հարկադիր տեղահանումն իրականացվել է ամերիկյան քաղաքական գործիչների աջակցությամբ եւ հրահրմամբ: Նրանք Կոնգրեսին եւ Թրամփի վարչակազմին կոչ են արել կիրառել նպատակային պատժամիջոցներ, պահանջել հայ ռազմագերիների ազատ արձակումը եւ ապահովել տեղահանված արցախահայերի անվտանգ ու արժանապատիվ վերադարձը:

Քննարկման մասնակիցները նախանշել են այն միջոցառումները, որոնք Միացյալ Նահանգները պետք է իրականացնի կրոնական ազատության պահպանման եւ հայերի դեմ Ադրբեջանի հետագա ագրեսիան կանխելու համար: Համբարյանն ընդգծել է, որ Ադրբեջանին պատասխանատվության ենթարկելու ձախողումը քաջալերում է ավտորիտար ռեժիմներին ամբողջ աշխարհում: Նա ԱՄՆ-ին կոչ է արել անհապաղ դադարեցնել ռազմական օգնությունը Ադրբեջանին, կիրառել «Մագնիցկու ակտով» սահմանված պատժամիջոցներ՝ ռազմական հանցագործությունների եւ մշակութային ժառանգության ոչնչացման համար պատասխանատու ադրբեջանցի պաշտոնյաների նկատմամբ, ինչպես նաեւ ներկայացնել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւ, որը կապահովի հայերի անվտանգ, պաշտպանված եւ արժանապատիվ վերադարձը Արցախ: Համբարյանը նկատել է. «Լավ քաղաքականությունը սկսվում է բարոյական մաքրությունից: ԱՄՆ-ը պետք է վճռական գործողություններ ձեռնարկի, այլ ոչ թե պարզապես մտահոգիչ հայտարարություններ անի»:

Կոնգրեսական Քրիս Սմիթը ԱՄՆ կառավարությանը կոչ է արել խստորեն դատապարտել հայկական եկեղեցիների եւ մշակութային ժառանգության ոչնչացումն Ադրբեջանի կողմից՝ զգուշացնելով, որ Բաքվի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքի շարունակական օկուպացիան հետագա ագրեսիայի նախերգանք է: «Մշակութային ոչնչացումը պետք է դադարեցվի: Ադրբեջանական ուժերը զբաղեցնում են Հայաստանի 75 մղոն տարածքը. Աստված մի արասցե սա էլ ավելի մեծ ագրեսիայի նախերգանք լինի». - ասել է Սմիթը: Նա պետդեպարտամենտին կոչ է արել Ադրբեջանին որակել որպես «Հատուկ մտահոգության երկիր» (CPC)՝ հայ քրիստոնյաների նկատմամբ սիստեմատիկ հալածանքների համար:

Քրիստինե Առաքելյանն իր հերթին պնդել է, որ Մերձավոր Արեւելքի քրիստոնյա բնակչությունը կարող է կարեւոր դեր խաղալ տարածաշրջանում խաղաղություն հաստատելու ամերիկյան ջանքերում: Նա մասնավորապես նկատել է. «Մերձավոր Արեւելքում քրիստոնյա բնակչության կայունացումը մեծապես օժանդակող եւ իրականում անհրաժեշտ պայման կլինի խաղաղություն ստեղծելու համար ոչ միայն Կովկասում Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ, այլ նաեւ պաղեստինյան հարցում»: Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանը կարեւորել է Արցախում միջազգային դիտորդական խմբերի տեղակայման հրատապությունը՝ փաստաթղթավորելու Ադրբեջանի կողմից հայկական եկեղեցիների եւ հոգեւոր կոթողների համակարգված ոչնչացումը: Նա նաեւ կոչ է արել պաշտպանելու միջազգային վերահսկողության ներքո՝ արցախահայության վերադարձի իրավունքը», - ասված է հաղորդագրության մեջ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ԴՐՈՇՄԱՎՈՐՈՒՄԸ ԿԼԻՆԻ ՓՈՒԼԱՅԻՆ

ՀՀ Պետեկամուտների կոմիտեն տեղեկացնում է, որ նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորումը ներդրվելու է փուլերով, մասնավորապես. 2025 թվականի մարտի 1-ից դրոշմավորվելու են գազավորված եւ ոչ ալկոհոլային ընպելիքները, մակարոնեղենը, թեյը եւ սուրճը, կենդանական եւ բուսական յուղերը, շոկոլադը եւ կակաո պարունակող սննդամթերքը, պահածոյացված մթերքը, գարեջուրը եւ գարեջրային խմիչքները:

2025 թվականի հունիսի 1-ից՝ կաթնամթերքը, մսամթերքը, երշիկեղենը եւ կենդանիների կերը:

2025 թվականի սեպտեմբերի 1-ից՝ նավթավերամշակման արտադրանքը, ներկանյութերը, լաքերը եւ չորարները:

2026 թվականի հունվարի 1-ից՝ դեղերը, վիտամինները, օծանելիքը, կոսմետիկան, հիգիենայի եւ խնամքի միջոցները:

Արտադրող ու ներմուծող ընկերությունները կամավոր կարող են նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման գործընթացն սկսել ավելի շուտ՝ մինչեւ սահմանված ժամկետները: Հիշեցնենք, որ Հայաստանում 2023-ից նույնականացման միջոցներով պարտադիր դրոշմավորվում են ծխախոտային արտադրանքը՝ մարտի 15-ից, ալկոհոլային ապրանքները՝ հոկտեմբերի 15-ից, փաթեթավորված խմելու ջուրը՝ 2024-ի մայիսի 1-ից:

ԳՈՒՄԱՐ ԵՆ ԿՈՐՔԵԼ ՈՒ ԱՆՀԵՏԱՑԵԼ

ArmLur.am-ին քաղաքացիներն ահազանգում են, որ Երվանդ Քոչարի 17/1 հասցեում գտնվող EuroJob consulting ընկերությունը խաբեությամբ է զբաղվում:

ArmLur.am-ին ահազանգած քաղաքացին պատմել է, որ դեռ մի քանի տարի առաջ է դիմել ընկերությանը, որպեսզի մեկնի արտագնա աշխատանքի՝ ընտանիքին ֆինանսապես ապահովելու համար: «Ես ու իմ նման շատ քաղաքացիներ խաբվել ենք EuroJob ձonsulting ընկերության կողմից: Մի քանի տարի առաջ դիմել եմ այդ ընկերությանը, քանի որ ուզում էի մեկնել արտագնա աշխատանքի, որ ֆինանսապես ապահովեմ ընտանիքիս: Պայմանագիր եմ կնքել նրանց հետ, ըստ որի՝ փաթեթի արժեքը 600.000 դրամ է: Դեսպանի մերժելու դեպքում այդ ընկերությունը պետք է պահում անի 120.000 դրամ, իսկ մնացած գումարը պետք է հետ վերադարձնի ինձ, բայց այդպես էլ իմ գումարը հետ չեն տալիս, անընդհատ խաբում են ինձ»,- ArmLur.am-ին պատմեց ահազանգած քաղաքացին: Քաղաքացու խոսքով՝ անգամ համաձայնագիր ունի, ըստ որի իր գումարը պետք է հետ վերադարձնեին 2024 թվականի դեկտեմբերի 27-ին, սակայն այդպես էլ հետ չեն վերադարձրել: ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել EuroJob consulting ընկերության տնօրեն Նարե Հարությունյանի հետ՝ պարզելու՝ ի՞նչ խնդրով պայմանավորված քաղաքացու գումարը հետ չեն վերադարձրել, սակայն վերջինս համառորեն չի պատասխանում ArmLur.am-ի զանգերին:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 10 պատահար. 3 մարդ զոհվել է, 12-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԲԱՆԿԱՅԻՆ

ՎԵՐԱՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԲԱՆԿԻՆ ՇՆՈՐՀԱԾ ՎԱՐԿԱՆԻՇԸ

Միջազգային հեղինակավոր Fitch վարկանիշային գործակալությունը (Fitch Ratings) վերահաստատել է Ակբա բանկին շնորհած «Երկարաժամկետ պարտավորություններ թողարկողի» (Long-Term Issuer Default Rating») «BB-» վարկանիշը, ինչպես նաեւ վերահաստատել բանկի կենսունակության վարկանիշը («bb-», Viability Rating): Ակբա բանկի՝ Fitch-ի կողմից վերահաստատված վարկանիշը հավասար է Հայաստանի Հանրապետության վարկանիշին (BB-) եւ գործակալության կողմից Հայաստանում տրամադրված ամենաբարձր վարկանիշն է: Fitch-ի կողմից շնորհված վարկանիշը արտացոլում է բանկի ամուր ֆինանսական դիրքը, կապիտալի կայուն դիրքը եւ ակտիվների որակի բարելավումը: Բանկի կայուն հեռանկարն արտացոլում է մրցակցային դաշտում կողմնորոշվելու եւ Հայաստանի տնտեսական զարգացմանը նպաստելու կարողությունը: Fitch-ը շեշտել է, որ Ակբա բանկի ակտիվների որակը եւ ֆինանսական կայունությունը շարունակում են մնալ բարձր: Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿԻ 35-ՐԴ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԸ

Ֆասթ Բանկը Չարենցավան քաղաքում նոր մասնաճյուղ է բացել: Քոչարի 60 հասցեում այսուհետ գործելու է Ֆասթի նոր՝ 35-րդ մասնաճյուղը: Երկհարկանի մասնաճյուղը հագեցած է նորագույն տեխնոլոգիաներով, հարմարավետ, ընդարձակ ու լուսավոր սրահներով, որտեղ հաճախորդների համար ստեղծված է պարզ, հարմարավետ եւ արագ սպասարկման միջավայր: Ֆասթ Բանկի Վարկերի վերլուծության ծառայության ղեկավար Ռաֆիկ Հարությունյանն ասել է. «Հավատարիմ մնալով հաճախորդներին մոտ ու հասանելի լինելու մեր առաքելությանը՝ Ֆասթ Բանկն այսօր բացում է իր թվով 35-րդ մասնաճյուղը՝ այս անգամ արդեն Չարենցավան քաղաքում, ինչի համար շատ ուրախ ենք: Թվային ներկայացվածությանը զուգահեռ մենք շատ ենք կարեւորում նաեւ մեր ֆիզիկական ներկայությունը, ուստի շատ ուրախ ենք, որ այսուհետ ունենք նաեւ հնարավորություն այս նոր ու գեղեցիկ սրահում սպասարկել մեր հաճախորդներին, առաջարկել բանկային ամենալայն ու ամենամրցունակ պրոդուկտները, ու որ ամենակարեւորն է՝ 24/7 գրաֆիկով: Սիրով սպասում ենք բոլորին»: Ներկայացված լինելով Հայաստանի բոլոր մարզերում՝ Ֆասթ Բանկի համար ռազմավարական նշանակություն ունի թվային լուծումների ակտիվ ներդրմանը զուգահեռ հաճախորդների հետ կենդանի շփման պահպանումը: Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: Ֆասթ բրենդը նախորդ տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԴԻՄՈՒՄՆԵՐԻՑ ԲԱՑԻ՝ ՆԱԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզպետ Դավիթ Առուշանյանը Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանի, մարզի բոլոր համայնքների ղեկավարների հետ ներկա է գտնվել Կադաստրի կոմիտեի Շիրակի խորհրդատվական նոր բացվող կենտրոնի աշխատանքների մեկնարկի արարողությանը: Նոր խորհրդատվական կենտրոնի բացման նպատակը էլեկտրոնային ծառայությունների շրջանակի ընդլայնմամբ պայմանավորված խորհրդատվական գործառույթ իրականացնելն է:

Խորհրդատվական կենտրոնը գործառույթներով տարբերվելու է սպասարկման գրասենյակից, քանի որ բացի դիմումների ընդունումից, նաեւ իրականացնելու է խորհրդատվություն՝ Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայությունների, կադաստրային քարտեզներում սխալների ուղղում կատարելու վերաբերյալ, տրամադրելու է պարզաբանումներ՝ իրավունքի գրանցման մերժումների, կասեցումների կապակցությամբ եւ այլն: «Քաղաքացիները չպետք է գնան համայնքապետարան, այնտեղից կադաստր եւ հակառակ եւ այսպես մի քանի անգամ, մինչեւ իրենց հարցը լուծում ստանա, հակառակ՝ պետք է լինի պատկան կառույցների համագործակցություն, որպեսզի չտուժի բնակիչը: Խորհրդատվական կենտրոնը համայնքապետարանների աշխատակիցների համար եւս հարթակ է, որը հնարավորություն կտա իրենց էլ այցելել, տեղեկանալ եւ այնուհետ իրենց դիմած քաղաքացիներին ճիշտ ուղղորդել: Ցանկացած պարագայում փոփոխությունները պետք է միտված լինեն ծառայությունները հասանելի, մեր քաղաքացիների սպասարկումն առավել մատչելի դարձնելուն: Վստահ եմ՝ պատկան կառույցների համատեղ աշխատանքով կհասնենք ցանկալի արդյունքների: Խոսքս թե մարզպետի աշխատակազմի, թե կադաստրի կոմիտեի, թե համայնքապետարանների աշխատակազմերի մասին է»,- նշել է Շիրակի մարզպետը: Կադաստրի կոմիտեի ղեկավար Սուրեն Թովմասյանն էլ նշել է, որ սպասարկման գրասենյակներում դիմումների ընդունման ծավալով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել հաջորդաբար անդրադառնալ մի քանի մարզային սպասարկման գրասենյակների վերակազմակերպման խնդրին, քանի որ մարզային սպասարկման գրասենյակներում եւս առկա է ինչպես ծանրաբեռնվածության մակարդակների անհամաչափություններ, այնպես էլ էլեկտրոնային ծառայությունների շրջանակի ընդլայնմամբ պայմանավորված խորհրդատվական գործառույթի իրականացման անհրաժեշտություն՝ վստահեցնելով, որ կոմիտեի քայլերը ուղղված են քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի բարելավմանն ու սպասարկման հնարավորությունների ընդլայնմանը:

Հանդիպման ժամանակ քննարկվել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, համայնքների ղեկավարները Կադաստրի կոմիտեի ղեկավարին ուղղել են հուզող հարցերն ու ստացել պարզաբանումներ, քննարկվել են կոնկրետ խնդիրներ, առաջարկվել լուծման տարբերակներ ծավալվել է ակտիվ երկխոսություն: Դավիթ Առուշանյանն ու Սուրեն Թովմասյանն այսուհետ հանդիպել են քաղաքացիներին, որոնք դիմել են իրենց հուզող խնդիրներով:

ԱՌԱՋԱՐԿ՝ «ԿՈՆՎԵՐՍ» ԲԱՆԿԻ ՔԱՐՏԱՊԱՆՆԵՐԻՆ

Կոնվերս Բանկն իր Mastercard քարտապաններին առաջարկում է միանալ Mastercard միջազգային վճարահաշվարկային համակարգի եւ Apple ապրանքանիշի համատեղ արշավին, 31.01.25 - 16.02.25թթ. գնել Apple գաջեթներ կամ աքսեսուար iSpace, Vega, Team Armenia, UCOM, VLV, iStore խանութներից եւ ստանալ.

10% գնիջեցում՝ iPhone-ի բոլոր մոդելների համար,

60% գնիջեցում՝ բոլոր օրիգինալ պատյանների համար. բացառությամբ iPhone 16-ի համար նախատեսված APPLE Clear Case with MagSafe մոդելի,

20% գնիջեցում ՝ AirPods 4 եւ AirPods with ANC մոդելների համար,

20% գնիջեցում՝ Apple-ի օրիգինալ աքսեսուարների համար:

Գնիջեցումը գործում է Mastercard-ով միանվագ վճարում կատարելիս եւ չի տարածվում առցանց գնումների վրա:

Այնպես որ, Բանկի՝ C360 փաթեթների ներքո Mastercard քարտ ունեցող հաճախորդները, գնելով Apple գաջեթ կամ աքսեսուար վերը նշված խանութներից, ավտոմատ կերպով կմասնակցեն նաեւ այս արշավին՝ կրկնապատկելով հաղթելու հավանականությունը:

Հիշեցնենք, որ Բանկի C360 Mastercard Standard, C360 Mastercard Gold, C360 Mastercard World Elite, Woman's Card, Mastercard Standard, Mastercard Gold, Mastercard World Elite քարտապանների համար արշավի շրջանակում, 23.12.2024-28.02.2025թթ. ներառյալ կատարելով հանրագումարային 50,000 ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի չափով անկանխիկ գործարքներ, Կոնվերս Բանկի քարտապանները կստանան գործարքների գնի մինչեւ 15 տոկոսի չափով քեշբեք, ինչպես նաեւ 4 էլեկտրական մեքենաներից մեկը պատահականության սկզբունքով հաղթելու հնարավորություն:

ՀՀ վաճառակետերում եւ արտասահմանյան վաճառակետերում կատարված անկանխիկ գնումները հաշվի են առնվելու առանձին: Արշավի հաղթողները կորոշվեն պատահականության սկզբունքով՝ Բանկի ֆեյսբուքյան էջում ուղիղ եթերի ժամանակ: Բանկի հաճախորդ չհանդիսացող հաճախորդները եւս կարող են դառնալ արշավի մասնակից՝ ներբեռնելով Converse Mobile հավելվածը, իսկ կենսաչափական նույնականացում անցնելուց հետո բաժանորդագրվելով C360 փաթեթներից մեկին կամ այցելելով Mastercard Բանկի մասնաճյուղ:

Կոնվերս Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋ ՏՈՆԻ ԽՈՐՀՈՒՐԴՆ ՈՒ ԾԱԳՈՒՄԸ

Հայ Առաքելական Եկեղեցին ամեն տարի փետրվարի 14-ին՝ Քրիստոսի Սուրբ Ծննդյան օրվանից 40 օր հետո, նշում է Քառասուն օրական մանուկ Հիսուսին տաճարին ընծայաբերելու տոնը՝ Տյառնընդառաջը: Տյառնընդառաջի տոնը Տիրոջն ընդառաջ գնալու հրավեր է բոլորին: Համաձայն նախնյաց օրենքի՝ ծննդաբերած կինը քառասուն օրական անդրանիկ զավակին դիտի տաներ տաճար, Աստծուն ընծաներ մատուցեր եւ օրհնություն ստանար: Հայ Առաքելական Եկեղեցու հաստատած կանոնների համաձայն, ութ օրականում մկրտում են մանկանը, իսկ 40 օրականում մայրը երեխայի հետ գալիս է տաճար, քահանան երեխային ընծայում է Աստծուն, իսկ մորը՝ մաքրագործում: Մարիամը քառասուն օրական Հիսուսին տանում է տաճար: Այստեղ էր Սիմեոն անունով բարեպաշտ ծերունին, ով Աստծուց հրաման էր ստացել մահ չտեսնել, մինչեւ տեսներ աշխարհի ու մարդկության Փրկչին: Սուրբ Հոգով առաջնորդվելով՝ նա ճանաչում է Փրկչին եւ ընդառաջ է գալիս Հիսուս մանուկին: Այստեղից էլ «Տիրոջն ընդառաջ» արտահայտությունը:

Տյառնընդառաջը տոնել փետրվարի 13-ի՞ն, թե՞ 14-ին: Հայ Եկեղեցու կանոնի համաձայն՝ տոնի նախօրեին, երեկոյան ժամերգությունից հետո կատարվում է նախատոնակ: Այն ավետում է Տերունի տոնի սկիզբը: Սովորաբար նախատոնակի արարողության ավարտին կատարվում է Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվում են աշխարհի չորս ծագերը: Անդաստանին հաջորդում է մոմերի օրհնության արարողությունը: Եկեղեցու կանթեղներից վերցված կրակով եկեղեցիների բակերում վառվում են խարույկներ՝ իբրեւ Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Վառվող մոմերը տուն տանելը եւ Եկեղեցու բակում վառվող խարույկն ըստ էության որ եւէ կապ չունեն մեր հեռավոր հեթանոս նախնիների կրակի պաշտամունքի հետ:

Ժողովրդի մոտ ձեւավորված այն հակասությունը, թե ե՞րբ է հարկավոր նշել Տյառնընդառաջը, բացատրվում է հետեւյալ կերպ. փետրվարի 13-ի երեկոյան ժամերգությունից հետո, եկեղեցական կարգի համաձայն, օրը փոխվում է: Այսինքն, Տյառնընդառաջի կրակը վառում են փետրվարի 14-ին՝ ըստ եկեղեցական օրացույցի, թե եւ աշխարհիկ օրացույցով դեռ 13-ն է: Փետրվարի 13-ին կատարվում է նախատոնակ, իսկ արդեն փետրվարի 14-ի առավոտյան մատուցվում է Ս. Պատարագ:

Տյառնընդառաջը՝նշանվածների թե՞ նորապսակների տոն: Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ, արդեն մի քանի տարի է, ինչ Տյառնընդառաջի Պատարագից հետո Հայոց եկեղեցիներում տեղի է ունենում նորապսակների օրհնության կարգ: Ըստ ժողովրդական ավանդույթի՝ Տյառնընդառաջի օրը պարտադիր կերպով փոխայցելություններ էին կատարում խնամիները, նորահարս ունեցող ընտանիքին այցելում էին հարսի հարազատները: Որպես կանոն, խարույկի դեզը պատրաստում էին նորափեսաները: Տյառնընդառաջի տոնին էր, որ նորափեսան պսակից հետո առաջին անգամ հանդիպում էր աներոջ հետ: Այդ պատճառով ժողովրդական ավանդության մեջ Տյառնընդառաջն ընկալվել է որպես փեսայի՝ աներոջ տուն այցելելու տաբուն վերացնելու հիմնական առիթ: Նախկինում պարտադիր կարգի համաձայն՝նորապսակ երիտասարդներն իրավունք չունեին հարսի ծնողների եւ հատկապես աներոջ հետ հանդիպել: Եվ Տրնդեզի կրակի վրայով ցատկելը վերացրել է արգելքը, ինչից հետո երիտասարդներն իրավունք են ստացել այցելել ծնողների տուն: Այս է պատճառը, որ Տյառնընդառաջը ժողովրդական ավանդույթի համաձայն վերաբերում է նորապսակներին, ոչ թե նշանվածներին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՎԵՐՍԿՍԵԼ Է ՄԱՐԶՈՒՄՆԵՐԸ

Խառը մենամարտերի թեթեւ քաշային կարգում UFC դասակարգման առաջատար Արման Ծառուկյանը վերսկսել է մարզումները: Այդ մասին հայտնել է նրա մենեջեր Դանիել Ռուբինշտեյնը՝ նաեւ հերքելով լուրերը, թե առաջիկայում Հայաստանի ներկայացուցիչը մենամարտելու է դասակարգման 7-րդ համար, ամերիկացի Մայքլ Չենդլերի հետ: «Հնարավոր մենամարտի վերաբերյալ իրական բանակցություններ չեն եղել: Միակ փաստն այն է, որ Արմանը վերսկսել է մարզումները: Միակ բանը, որ անում են «լրագրողները», մենամարտերի անցկացումը սպառնալիքի տակ դնելն է՝հրապարակելով տեղեկություն, որը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը»,- նշել է նա: Հիշեցնենք, որ Արման Ծառուկյանը մեջքի վնասվածքի պատճառով հրաժարվել էր UFC չեմպիոն, ռուսաստանցի Իսլամ Մախաչեւի հետ մենամարտից եւ արդեն տիտղոսի հավակնորդ չէ:

ՌԱՄՈՍԸ ՏԵՂԱՓՈԽՎԵԼ Է

Իսպանիայի հավաքականի, «Սեւիլիայի», Մադրիդի «Ռեալի» եւ փարիզյան ՊՍԺ-ի նախկին խաղացող, 38-ամյա պաշտպան Սերխիո Ռամոսը տեղափոխվել է մեքսիկական «Մոնտերեյ»: Կողմերը կնքել են մեկ տարվա պայմանագիր: 2024թ. ամռանը «Սեւիլիայից» հեռանալուց հետո Սերխիո Ռամոսն ազատ գործակալի կարգավիճակում էր: Սերխիո Ռամոսն Իսպանիայի հավաքականում դարձել է աշխարհի չեմպիոն, Եվրոպայի կրկնակի չեմպիոն: «Ռեալում» նա նվաճել է 22 տիտղոս, այդ թվում Իսպանիայի Լա Լիգայի 5 եւ Չեմպիոնների լիգայի 4 տիտղոս:

«ՆՈԱՆ» ԵՐԿԱՐԱՁԳԵԼ Է ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Ֆուտբոլի Հայաստանի փոխչեմպիոն «Նոան» երկարաձգել է պայմանագիրը 28-ամյա ֆրանսիացի վինգեր Վիրջիլ Պինսոնի հետ մինչեւ հաջորդ մրցաշրջանի ավարտը եւս մեկ տարով երկարաձգելու հնարավորությամբ, հաղորդում է երեւանյան ակումբի ֆեյսբուքյան էջը: Վիրջիլ Պինսոնը 2024թ.փետրվարին է միացել «Նոային»: Նա կարիերայի մեծ մասն անցկացրել է ֆրանսիական եւ բուլղարական ակումբներում: Պինսոնի նախորդ թիմը եղել է ռումինական «Բոտոշանին», որի կազմում նա հանդես էր գալիս 2022 թվականի սեպտեմբերից: Transfermarkt-ը Վիրջիլ Պինսոնի տրանսֆերային արժեքը գնահատում է 350 հազար եվրո:

«Արժանի էինք պարտությանը»

Իտալիայի չեմպիոն Միլանի «Ինտերի» իտալացի գլխավոր մարզիչ Սիմոնե Ինզագին մեկնաբանել է «Ֆիորենտինայից» կրած 0:3 հաշվով պարտությունը Ա Սերիայի 14-րդ տուրի խաղում: «Ամբողջովին ձախողեցինք խաղը. վազքի, ագրեսիայի, վճռականության պակաս էր զգացվում մեր խաղում: Արժանի էինք այս պարտությանը: Շնորհավորում եմ «Ֆիորենտինային»:

ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

ՄԱՐԻԱՄԱՁՈՐ ԳՅՈՒՂԸ ՎՏԱՆԳՎԱԾ Է

Ժամանակավորապես բռնազավթված Արցախում Ադրբեջանի ֆաշիստական վարչակարգը շարունակում է ոչնչացնել համաքրիստոնեական նշանակություն ունեցող պատմա-ճարտարապետական կոթողներ, ամբոջական բնակավայրեր եւ բնակելի թաղամասեր: Այդ քաղաքականության հերթական թիրախն է դարձել Արցախի Հանրապետության Հադրութի շրջանի Մարիամաձոր գյուղը, այս մասին հայտնում են «Հայկական լեռնաշխարհի մշակութային ժառանգության օմբուդսմեն» էջում: «Այս բոլոր փաստերը եւս մեկ անգամ վկայում են, որ Արցախի տարածքում գտնվող ամբողջ համամարդկային արժեք ներկայացնող ժառանգությունը գտնվում է ամբողջական ոչնչացման եւ յուրացման վտանգի տակ, ինչը նույնպես ցեղասպանության դրսեւորում է:

Հիշեցնենք, որ Ադրբեջանն այն երկիրն է, որը տարիներ առաջ պետական մակարդակով ոչնչացրեց Ջուղայի հազարամյա խաչքարերը եւ մնաց անպատիժ: Բնավ էլ անսպասելի չէ, որ նույնը կատարվելու է բռնազավթված Արցախում, որտեղ Ադրբեջանն իրեն վերապահում է գործողությունների ազատություն: Եվ Արցախում հայկական մշակութային ժառանգության հանդեպ կատարվող վանդալիզմը արձանագրում են նաեւ միջազգային գիտական կենտրոնները, որոնք մեզ կարեւոր հիմք են տալիս ադրբեջանական՝ ցեղասպան եւ ահաբեկիչ պետությանը միջազգային դատարանի առաջ կանգնեցնելու համար»,- նշվում է հաղորդագրությունում:

«ԱՄԵՆԱՎՏԱՆԳԱՎՈՐ ՖԻԼՄԵՐԻՑ ՄԵԿԸ»

Ակադեմիկոսը քննադատել է «Գեղեցկուհին եւ հրեշը»՝ նշելով, որ այն «ամենավտանգավոր ֆիլմերից մեկն է», քանի որ «ստոկհոլմյան համախտանիշի» օրինակ է: ը: Արեւելյան Անգլիայի համալսարանի հումանիտար գիտությունների դասախոս դոկտոր Վիկտորիա Քենը պնդում է, որ 1991 թվականի անիմացիան խնդրահարույց է, քանի որ Հրեշը միշտ բռնության եզրին է եղել եւ սպառնալից պահվածք է ցուցաբերել: Նա Բելի եւ հրեշի հարաբերությունները համեմատել է «Ստոկհոլմյան համախտանիշի դասական դեպքի» հետ, որը հոգեբանական վիճակ է, որն առաջանում է, երբ զոհը կապվում է իր բռնարարի կամ գերեվարողի հետ՝ ապահովելու իր գոյատեւումը: Նրա խոսքով՝ ֆիլմում հրեշը ներկայացված է որպես ռոմանտիկ կերպար, բայց նա իրականում բավականին կոպիտ է Բելի նկատմամբ, նա փակում է նրան իր սենյակում, բղավում նրա վրա եւ նույնիսկ սպառնում է սպանել: Ավելի ուշ Բելը սիրահարվում է նրան՝ չնայած ուժի անհավասարակշռությանը եւ նրա սպառնալից պահվածքին, իսկ հետո հրեշը վերածվում է գեղեցիկ արտաքինով արքայազնի:

● *Փետրվարի 12-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Մորաքույրը Փարիզից» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2500, 3000, 3500, 4000, 4500, 5000, 6000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինչպիսի՞ իրավական գործիքներ են առկա շահերի բախման իրավիճակները զսպելու կամ կառավարելու համար:

Սերգեյ Վարդանյան (27 տարեկան)



ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ

ՊԱՏԱՍԽԱՆ. Շահերի կառավարման իրավական մեխանիզմները գտնվում են շարունակական եւ պարբերական բարելավման գործընթացում: Այդուհանդերձ, գործող իրավակարգավորումներն արդեն իսկ հնարավորություն են տալիս կառավարելի դարձնել դրանք՝ խուսափելու, հայտնելու, լուծելու կառուցակարգերի միջոցով: «Հանրային ծառայության մասին» օրենքը պաշտոն զբաղեցնող անձանց, որպես կանխարգելման մեթոդ, նախ եւ առաջ առաջարկում է ձեռնպահ մնալ շահերի բախման իրավիճակում գործողություն (անգործություն) կատարելուց կամ որոշում ընդունելուց, այդ թվում՝ որոշման ընդունման նախապատրաստական աշխատանքներին մասնակցելուց: Միաժամանակ, նախատեսվում են առանձնահատուկ կարգավորումներ վերադաս կամ անմիջական ղեկավար ունեցող անձանց եւ այդպիսիք չունեցող կամ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց համար:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով

ԺՈՂՈՎՈՒՐԴ. Կարգավորումների հիմնական տրամաբանությունն առաջին դեպքում ենթադրում է շահերի բախման մասին վերադաս անձին հայտնելու պարտավորություն, ով առաջարկում է իրավիճակի լուծմանն ուղղված որոշակի քայլեր: Մինչդեռ, վերադաս կամ անմիջական ղեկավար չունեցող անձանց եւ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց օրենքը հնարավորություն է տալիս խորհրդատվություն ստանալու նպատակով դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Եթե բանկը հաճախորդի հաշվեհամարին գումարը երկու անգամ է փոխանցում, պարտավո՞r է արդյոf հաճախորդը վերադարձնել այդ գումարը:

Անահիտ Ապրեսյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո՛, հաճախորդը պարտավոր է այդ գումարը հետ վերադարձնել, քանի որ անձը, ով առանց օրենքի, այլ իրավական ակտերի կամ գործարքի սահմանված հիմքերի ուրիշ անձի (տուժողի) հաշվին ձեռք է բերել գույք կամ խնայել է այն (ձեռք բերողը), պարտավոր է տուժողին վերադարձնել անհիմն ձեռք բերած կամ խնայած գույքը (անհիմն հարստացումը)՝ բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1099 հոդվածով նախատեսված դեպքերի (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1092 հոդվածի 1-ին կետ):

Այս կանոնը կիրառվում է՝ անկախ այն բանից՝ անհիմն հարստացումը ձեռք բերողի, տուժողի, երրորդ անձանց գործելակերպի հետեւանք է եղել, թե կատարվել է նրանց կամքից անկախ:

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բանկն իրավունք ունի նաեւ առանց հաճախորդի կարգադրության հաշվից գումար դուրս գրել դատարանի վճռով սահմանված դեպքերում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

«Հասարակական տրանսպորտի վճարից խուսափելու ինքնատիպ լուծում են գտել մեր ուղեւորները:

Խորոված կծու բիբարի, կծու նագեթսի համար վճարված չեկով անհույս փորձում են վալիդատորի միջոցով վճարում կատարել:)

Կերած-խմածներդ անուշ լինի, բայց վճարումը կամ բանկային քարտով, կամ տրանսպորտային քարտով, կամ TelCell հավելվածով, կամ TelCell տերմինալի միջոցով ձեռք բերված QR-ով»:

Այս լուսանկարը եւ գրառումն արել է Երեւանի քաղաքապետարանի մամուլի խոսնակը՝ ենթատեքստում կրկին քարոզելով 150 դրամ վճարումը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-7 - 12 -3 + 2
Կոտայքի լեռներ	-6 - 10 -2 + 2
Կոտայքի նախալեռներ	-4 - 9 0 + 3
Գեղարքունիք	-6 - 11 -3 + 1
Լոռի	-7 - 10 -1 + 4
Տավուշ	-3 - 6 0 + 2
Արագածոտնի լեռներ	-9 - 14 -2 + 4
Արագածոտնի նախալեռներ	-1 - 3 -1 + 5

Արարատ	0 - 5 +1 + 4
Արմավիր	-3 + 1 +4 + 6
Վայոց ձորի լեռներ	-4 - 7 +2 + 4
Վայոց ձորի նախալեռներ	-2 + 2 +4 + 6
Սյունիքի հովիտներ	-6 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	0 + 3 +7 + 10
ԼՂՀ	0 + 2 +7 + 9
Երեւան	-1 - 3 +8 + 10

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.2.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*